



# ՖԵՅՍԲՈՒԿԸ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՐԹԱԿ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Էլեկտրոնային տեղեկագիր N 1, 2013

Ֆեյսբուք սոցիալական ցանցում 2013 թ.  
ՀՀ նախագահական ընտրությունների լուսաբանման  
այս ուսումնասիրությունն իրականացվում է  
«Ռեզիոն» հետազոտական կենտրոնի  
ծրագրով եւ Բաց հասարակության  
հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության  
ֆինանսական աջակցությամբ:

Դիտարկման գաղափարը,  
մեթոդաբանությունը եւ արդյունքների վերլուծությունը՝  
Ռեզիոն կենտրոնի տնօրեն՝ **Լատրա Բաղդասարյանի**

Դիտարկման խումբը՝ **Սոնա Քյուրքյան, Անժելա Չոբանյան,  
Սոսի Խանիկյան, Լենա Նազարյան, Վահե Սարուխանյան**

Դիտարկման արդյունքների տեխնիկական մշակումը,  
հաշվարկը, աղյուսակներն ու գրաֆիկները՝ **Շողիկ Ստեփանյանի**

Սույն էլեկտրոնային տեղեկագրում տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը Ռեգիոն հետազոտական կենտրոնն է, որի բովանդակության համար միայն այդ կազմակերպությունն է պատասխանատու: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի կամ նրա խորհրդի կողմից, հետևաբար չեն ներկայացնում Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները:

Սույն էլեկտրոնային տեղեկագրի բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի տեսակետներին:

Սույն էլեկտրոնային տեղեկագրի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ ՋԼՄ-ների աջակցման ծրագրի շրջանակներում, դրամաշնորհ N18166:

Ռեգիոն հետազոտական  
կենտրոնն ինտերնետում  
[www.regioncenter.info](http://www.regioncenter.info)  
[www.publicdialogues.info](http://www.publicdialogues.info)  
<http://facebook.com/RegionCenter>



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան



## ՖԵՅՍԲՈՒՔԸ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ՆԱԽՔԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ

2013 թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների առիթով Ռեզիոն հետազոտական կենտրոնը 2012 թ. դեկտեմբերի 1-ից վերսկսեց Ֆեյսբուք սոցիալական ցանցի որպես Հայաստանում ընտրական գործընթացում օգտագործվող միջոցի հետազոտությունը:

### Նպատակ կա՝

- դիտարկել քաղաքական ուժերի, նրանց անդամների եւ համակիրների, նախագահի թեկնածուների կողմից Ֆեյսբուք սոցիալական ցանցը որպես նախագահական ընտրություններում քարոզչական գործիք կիրառելու ձևերը, ծավալները, հանրությանը հասցեագրված ուղերձները՝ նրանց ուշադրությանը ներկայացված բովանդակությունների քանակական ու թեմատիկ վերլուծության միջոցով:
- դիտարկել նախագահական ընտրությունների հետ կապված տարբեր զարգացումների եւ ընդհանուր առմամբ՝ նախագահական ընտրական ողջ գործընթացի նկատմամբ Հայաստանի ֆեյսբուքյան հանրության վերաբերմունքը՝ նրանց կողմից ցանցային ասպարեզ բերված բովանդակությունների քանակական եւ թեմատիկ վերլուծության միջոցով:

Եթե հիմք ընդունենք Socialbakers.com -ի բերած հայաստանյան օգտատերերի տարիքային խմբերի մասին ցուցանիշները եւ կատարենք մի քանի թվաբանական գործողություն, ապա պարզ կդառնա, որ նախագահական ընտրությունների պաշտոնական քարոզարշավի մեկնարկի օրը Ֆեյսբուքի հայաստանցի օգտատերերի ճնշող մեծամասնությունը՝ 84%-ը (316 528 օգտատեր) 18 եւ դրանից բարձր տարիքային խմբերից են՝ օժտված ընտրելու իրավունքով:

## Համառոտ մեթոդաբանական ուրվագիծ

Ֆեյսբուքում նախքան պաշտոնական քարոզչության մեկնարկը (2013 թ. հունվարի 21) ծավալվող բովանդակային զարգացումները հստակ արձանագրելու, համարժեք ընկալելու համար սահմանվել են մի շարք քանակական եւ բովանդակային չափորոշիչներ, որոնցով հնարավոր է դարձել պարզել՝

### Ակտիվությունները

- Ֆեյսբուքյան ինչպիսի՞ ակտիվություններ են ունեցել քաղաքական գործիչները, ապա նաեւ՝ նախագահի թեկնածուները, քաղաքական ուժերի համակիրները:

Դա արվել է նրանց էջերում ընտրական գործընթացների մասին նյութերի, սեփական ստատուսների, նրանց մասնակցությամբ ընթացող քննարկումների քանակական ու բովանդակային ցուցանիշները համադրելու միջոցով:

### Ուղերձները

- Որո՞նք են եղել Ֆեյսբուքի միջոցով հանրությանը հասցեագրված հիմնական ուղերձները:

Դա արվել է ընտրությունների մասին նյութերում արձարծվող խնդիրների սանդղակներ կազմելու, վերլուծության համար հստակ ու չափելի կողեր սահմանելու միջոցով: Այդ խնդիր-կողերի քանակական ցուցանիշների շնորհիվ հնարավոր է դարձել սահմանել դիտարկման փուլում հանրությանը հասցեագրված հիմնական ուղերձները:

### Վերաբերմունքը

- Ինչպե՞ս է վերաբերվել Ֆեյսբուքյան հանրությունն այդ ուղերձներին:

Դա արվել է քննարկումների (comment) ինտենսիվության եւ բովանդակության հետազոտության միջոցով:

## Դիտարկվել են՝

2012 դեկտեմբերի 1-2013 հունվարի 20 - ՀՀԿ, ՀԱԿ, ԲՀԿ, Ժառանգություն, ՀՅԴ անդամների 11, այդ կուսակցությունների պաշտոնական 3, նրանց հարող 5 խմբերի, նրանց համակիրները հանդիսացող եւ այդ մասին հայտարարող 4 օգտատերերի եւ Ֆեյսբուքյան դայջեսթ համարվող «Ֆեյսբուքյան ակտիվիստներ»-ի էջերը:

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 20 էջ:

## ԱՅԴ ԹՎՈՒՄ՝

ՀՀԿ-ից Արմեն Աշոտյանի, Կարեն Ավագյանի, ՀԱԿ-ից՝ Հրանտ Բագրատյանի, Նիկոլ Փաշինյանի, ԲՀԿ-ից՝ Վարդան Օսկանյանի, Վահան Բաբայանի, Վահե Էնֆիաջյանի, Ժառանգությունից՝ Ստյոպա Սաֆարյանի, Դավիթ Սանասարյանի, ՀՅԴ-ից՝ Կիրո Մանոյանի, Լիլիթ Գալստյանի էջերը: Նաև ՀՀԿ եւ ՀԱԿ համակիրներ՝ Տիգրան Քոչարյանի (Փիդ), Տարոն Պարսամյանի, Հրանտ Տեր-Աբրահամյանի, Վիլեն Գաբրիելյանի (Նավակ Ճոճոդ) էջերը:

Հայ ազգային Կոնգրես - <http://www.facebook.com/armnatlcongress>, Ժառանգություն կուսակցություն - <http://www.facebook.com/Heritage.am?ref=ts&fref=ts> պաշտոնական էջերը:

Վերը նշված կուսակցություններին հարող ֆեյսբուքյան խմբերի՝

Նախագահական ընտրություններ 2013 (<http://www.facebook.com/groups/273414682775031/?fref=ts>),

Քաղաքացիական հասարակություն բլոգ (<http://www.facebook.com/qah.has.blog?ref=ts&fref=ts>),

Heritage Party – Ժառանգություն կուսակցություն (<http://www.facebook.com/groups/heritagepartyinarmenia/?ref=ts&fref=ts>),

Քվեն ուժ է (<http://www.facebook.com/qven.uje?fref=ts>) էջերը:

Ինչպես նաև՝ «Ֆեյսբուքյան ակտիվիստներ» էջը՝ որպես օգտատերերի էջերի կոնտենտների դաջեսթ (<http://www.facebook.com/face.activists?ref=ts&fref=ts>): Էջը բացվել է 2012թ. նոյեմբերից եւ ներկայումս արդեն հավաքագրում է ոչ միայն այսպես կոչված պարզ օգտատերերի, այլև՝ քաղաքական ու հասարակական հանրահայտ գործիչների էջերի կոնտենտները:

**Ֆեյսբուքում քաղաքական վերը նշված ուժերի ներկայացվածության բոլոր ուղղություններից (պաշտոնական էջեր, անդամների, համակիր ակտիվիստների էջեր եւ խմբեր) ընտրվել են դիտարկման փուլում ակտիվ գործող (կոնտենտներով համալրվող) էջերը: Ասենք, ՀՀԿ պաշտոնական էջը (Republican Party of Armenia hhk.am Հայաստանի Հանրապետական Կուսակցություն) չի ուսումնասիրվել, քանի որ նրա վերջին բովանդակային թարմացումը կատարվել է սեպտեմբերի 26-ին:**

Ֆեյսբուքում ներկա այլ քաղաքական ուժերի շարքից խորհրդարանական հենց այս կուսակցությունների եւ հենց այս օգտատերերի ընտրությունը պայմանավորված էր մեր այն սպասելիքներով, որ նախագահական ընտրություններում այդ ուժերը, իսկ ֆեյսբուքյան քննարկումներում այդ օգտատերերը պետք է ունենային կարելու դերակատարություն ընտրությունների հետ կապված քաղաքական տրենդների իրենց ընկալումները ֆեյսբուքյան հանրությանը ներկայացնելու հարցում: Այդ սպասելիքները պայմանավորված էին

խորհրդարանական ընտրությունների շրջանում եւ դրանից հետո ընկած ժամանակահատվածում վերը նշված քաղաքական գործիչների եւ հատկապես համակիր օգտատերերի ստաբիլ ակտիվություններով Ֆեյսբուքում:

**2012 թ. հունվարի 4-20 – ընթացքում սրան գուգահեռ մենք սկսեցինք դիտարկել նաեւ ՀՀ նախագահի 8 թեկնածուներից 7-ի էջերի հետազոտությունը վերը նշված չափանիշների կիրառմամբ:**

Դրանք են՝ Ժառանգության առաջնորդ Բաֆֆի Հովհաննիսյանի, Ազատություն կուսակցության առաջնորդ Հրանտ Բազրատյանի, ԱԻՄ առաջնորդ Պարույր Հայրիկյանի, քաղաքացիական նախաձեռնություններով առաջադրված թեկնածուներ՝ Վարդան Սեդրակյանի, Արման Մելիքյանի, Անդրիաս Ղուկասյանի էջերը: Ինչպես նաեւ թեկնածու Վ.Սեդրակյանի ֆեյսբուքյան «Վարդան Սեդրակյան» խմբի էջը:

ՀՀ գործող նախագահ Ս.Սարգսյանն այս սոցիալական ցանցում էջ չունի:

**ԵՎՍ 8 էջ:**

**Այսպիսով՝ մեր քանակական եւ բովանդակային ցուցանիշները արտացոլում են ընդհանուր առմամբ 28 ֆեյսբուքյան էջերի մոտ երկու ամիս անընդմեջ ուսումնասիրելու արդյունքները:**

Միանգամից նշենք, որ քանի որ նախագահի թեկնածուները ֆեյսբուքում որպես այդպիսիք հանդես եկան դիտարկման փուլի տարբեր հատվածներում, նրանց էջերի բովանդակությունների հիման վրա մեր կողմից կազմված աղյուսակները պետք է ընկալել որպես հիմնական հարաբերակցություններ, այլ ոչ թե ցուցանիշների ռեյտինգներ: Օրինակ, ՀԱԿ-ից ԱԺ պատգամավոր Հրանտ Բազրատյանի էջը դեկտեմբերի 1-31 ընթացքում մենք դիտարկել ենք որպես ՀԱԿ ներկայացուցիչ, մինչդեռ նախագահի թեկնածու դառնալու նրա հայտարարությունը եղավ դեկտեմբերի վերջին տասնօրյակում: ՀՀ նախագահի թեկնածու Արամ Հարությունյանը Ֆեյսբուքին միացավ հունվարի 9-ից: Մինչդեռ քաղաքացիական նախաձեռնություններով առաջադրված Անդրիաս Ղուկասյանն ու Վարդան Սեդրակյանը դեկտեմբերի ընթացքում արդեն ակտիվորեն գովազդում էին իրենց ֆեյսբուքյան էջերի կոնտենտները եւ հայտարարում առաջադրվելու իրենց մտադրությունների մասին:

Ուրեմն՝ ճիշտ կլինի նախագահի թեկնածուների էջերի հետազոտության արդյունքներն ընկալել որպես պաշտոնական քարոզչությունից առաջ մեկնարկային դիրքեր Ֆեյսբուքում ունեցած լսարանների չափի, նրանց հետ ինտերակտիվ կապի, ընտրական տարբեր ուղերձներով նրանց հանդես գալու տեսանկյունից: Այդ մեկնարկը մենք սահմանեցինք հունվարի 4-ից, երբ դեկտեմբերի ընթացքում առաջադրումների մասին 15 թեկնածուներից տարբեր պատճառներով մնացին 8-ը:

Հիշեցնենք, որ նման ուսումնասիրություն առաջին անգամ մենք անց ենք կացրել 2012 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Արդյունքում մենք արձանագրեցինք, որ մի

քանի առանձին բացառություններով քաղաքական գործիչների ու նրանց կազմակերպությունների կողմից Ֆեյսբուքը կիրառվում էր գլխավորապես որպես տեղեկատվության անսահմանափակ տարածման, եւ ավելի պակաս՝ տարբեր իրադարձությունների ու ընտրական պատմությունների առիթով պոտենցիալ ընտրազանգվածի հետ շփումների ու քննարկումների միջոց: Այս իմաստով Ֆեյսբուքը հանդես էր գալիս մի դեպքում որպես քարոզչության առանցքային, մյուս դեպքում՝ որպես եւս մեկ գործիք, որը պետք է կիրառել մյուսներից ետ չմնալու համար:

## ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂՉԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁԵՐ

Անցած 6 ամիսների ընթացքում Ֆեյսբուքի գլխավոր դերակատարները շարունակում էին մնալ այսպես կոչված պարզ օգտատերերը, որոնք կամ որպես տարբեր քաղաքացիական նախաձեռնությունների մասնակիցներ, կամ՝ այսպես կոչված Ֆեյսբուքյան հանրության հեղինակություններ ուղղորդում ու կազմակերպում էին Հայաստանի հասարակության մեջ խմորվող տարբեր բողոքական տրամադրությունները:

Մենք նաեւ ընդգծել էինք, որ արդյունքում Ֆեյսբուքը հայաստանյան միակ մեդիան էր, որն արտացոլում էր հանրային կարծիքների առավել բազմազան պատկերը:

Երկու ընտրությունների միջեւ ընկած ժամանակահատվածում ֆեյսբուքյան դիսկուրսը, նախաձեռնությունները սկսեցին ընկալվել որպես հայաստանյան հասարակության մեջ արմատավորվող տրամադրությունների չափման եթե ոչ գլխավոր, ապա կարեւորագույն միավոր: Արդյունքում երկրում ընթացող այս կամ այն գործընթացի կարեւորությունը սկսեցին չափել ֆեյսբուքյան հանրության կողմից դրանց հատկացվող ուշադրության աստիճանով:

Որքան ինտենսիվ ու լայնածավալ էին իրադարձությունների քննարկումները Ֆեյսբուքում, այնքան մեծ էր իշխանական տարբեր կառույցների կողմից ռեալ կյանքում դրանց անդրադարձների քանակը:

Դեկտեմբերի 20-ին Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը հանդիպում ունեցավ Ֆեյսբուքի ակտիվ օգտատերերի հետ եւ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատանքները, մայրաքաղաքի բարեկարգման ծրագրերը: Հանդիպումը տեղի ունեցավ մինչ այդ մայրաքաղաքի նախատոնական արդարանքի կապակցությամբ Ֆեյսբուքում ծավալված քննադատության եւ ծաղրի ակտիվ ֆոնին: Ի դեպ, տոնի կապակցությամբ Երեւանի փողոցներում հայտնված մի քանի արձանիկներ (պինգվիններ եւ ֆլամինգոներ, որոնք ֆեյսբուքում տարածված կարծիքի համաձայն բացարձակ կապ չունեն հայաստանյան կլիմայական պայմանների հետ) կարճ ժամանակ անց ապամոնտաժվեցին:

Ֆեյսբուքյան դիսկուրսը շարունակում էր ազդել ավանդական մեդիաների (դրանց շարքին մենք դասում ենք նաև առցանց լրատվամիջոցներին) տեղեկատվական պատկերի վրա: Հայաստանյան մամուլում ավելի ու ավելի հաճախ կարելի էր հանդիպել այս կամ այն օգտատիրոջ, այդ թվում՝ արդեն նաև հասարակական ու քաղաքական տարբեր գործիչների ֆեյսբուքյան գրառումների արտատպությունները:

**Հավանաբար այն պատճառով, որ Ֆեյսբուքի այսպես կոչված կազմակերպչական հնարավորություններն սկսեցին օգտագործել նաև նախագահի թեկնածուները:**

## Քաղաքական կազմակերպիչ

Այսպես, ՀՀ նախագահի թեկնածու **Հրանտ Բագրատյանն** իր առաջադրման մասին առաջին հայտարարությունն արեց Ֆեյսբուքի միջոցով: Ի դեպ, այս առթիվ օգտատերերից մեկը գրեց. «Ժամանակներ...երբ առաջադրման մասին առաջինը հայտնում են Ֆեյսբուքի միջոցով: Հետո էլ կասեն, թե Ֆեյսբուքը լուրջ հարթակ չէ» (Իզաբելլա Աբգարյան, «Ֆեյսբուքյան ակտիվիստներ», 20.12.12):

Որպես նախագահի թեկնածուներ իրենց մասին հայտ ներկայացրեցին նաև քաղաքացիական նախաձեռնություններով առաջադրված **Վարդան Մեղրակյանը եւ Անդրիաս Ղուկասյանը**, բացելով դրա համար հատուկ էջեր եւ ակտիվորեն գովազդելով դրանց բովանդակությունները ֆեյսբուքում: Մինչ այդ նրանք հասարակությանը հայտնի չէին:

Կուսակցական սպասվող խորհրդակցությունների մասին հայտարարություններ (թե որտե՞ղ են դրանք տեղի ունենալու, ժամը քանիսի՞ն է այլն) կարելի է գտնել նաև ԲՀԿ անդամների էջերում:

Իր առաջադրման թղթավարական արարողություններն ավարտելուց հետո հունվարի 9-ից Ֆեյսբուքին միացավ մեկ ուրիշ թեկնածու՝ **Արամ Հարությունյանը**:

Բացի իր էջից արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիների մասին տեղեկություններ ստանալու նպատակով (ընտրացուցակների հարցը պարզելու համար) հատուկ առանձին էջ (Presidentialelection2013-նախագահական ընտրություններ2013) բացեց նաև ՀՀ նախագահի մեկ այլ թեկնածուն՝ **Արման Մելիքյանը**: «Հայաստանից բացակայող ՀՀ քաղաքացի ընտրողները կարող են այցելել հետեւյալ էջ եւ նշել ընտրություններին չմասնակցելու մասին: Այդպիսով օժանդակելով՝ արդար եւ իրավաչափ ընտրությունների կայացմանը, կանխելով սեփական ձայների հնարավոր կեղծումը», - գրված է այս էջում (<http://www.facebook.com/messages/1251552163#!/pages/Presidentialelection2013>):

Ֆեյսբուքի միջոցով պոտենցիալ ընտրողների հետ կապ պահպանելու, նրանց իր նախընտրական կամպանիայի մասնակիցները դարձնելու առումով առանձնանում է նախագահի թեկնածու **Հրանտ Բագրատյանը**: Նա Ֆեյսբուքով ներկայացրեց իր



նախընտրական շտաբի անդամներին, գրեց նրանց հեռախոսահամարները եւ առաջարկեց հարցեր ունենալու դեպքում դիմել համապատասխան խնդրով զբաղվող իր շտաբի անդամին: Հ. Բագրատյանի ֆեյսբուքյան մյուս նորարարությունն (know how) այն էր, որ նա կազմակերպեց օգտատերերի մասնակցությամբ իր նախընտրական կարգախոսի ընտրության գործընթացը: Արդյունքում օգտատերերն առաջարկեցին կարգախոսների 89 տարբերակ: Ներկայումս թեկնածուի երկու կարգախոսներից մեկը («Հայաստանը միայն Երեւանը չէ») առաջարկվել է ֆեյսբուքյան օգտատերերի կողմից:

## Ֆեյսբուքյան մեդիա -պրոյեկտներ

Ֆեյսբուքում կամ ֆեյսբուքի հնարավորությունների կիրառմամբ արդեն հիմա իրականացվում են տարբեր մեդիա պրոյեկտներ: Օրինակ, ֆեյսբուքյան լսարանին դիմում են տարբեր մեդիաներ իրենց տաղավարի հյուրին հարցեր ուղղելու խնդրանքով: Այդպես 2013 թ. հունվարից սկսեց վարվել «Երկիր Մեդիա» հեռուստատեսության «Երկրի հարցը» հաղորդաշարի հեղինակ եւ վարող Արթուր Կիրակոսյանը: Նա իր էջում տեղեկացնում է օգտատերերին, թե ով է լինելու իր հերթական թողարկման հյուրը եւ եթերում ի թիվս այլ հարցերի հնչեցնում է ֆեյսբուքյան հանրության հարցերը:

2012 թ. դեկտեմբերից որոշ դադարից հետո վերսկսվեց Ազատություն Ռադիոկայանի «Ֆեյսբուքյան ասուլիսներ» -ի շարքը: Մեր դիտարկման ժամանակահատվածում կազմակերպվել են 5 ասուլիսներ (ՀԱԿ-ից՝ ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանի, ՀՀ նախագահի թեկնածուներ Բաբայանի, Հրանտ Բագրատյանի, Վարդան Մեդրակյանի, ՀՀ առողջապահության նախարար, ՀՀԿ անդամ Դերենիկ Դումանյանի հետ): Հաղորդման ձեւաչափը նույնպես խարսխված է ֆեյսբուքյան օգտատերերի հետ կապ պահպանելու վրա. նրանց հարցերին քաղաքական գործիչները պատասխանում են ռադիոկայանի տաղավարում: Ընդ որում՝ ինտերակտիվ ավելի մեծ շփում ունենալով հենց այս միջոցով, քան թե իրենց սեփական ֆեյսբուքյան էջերում: Վերը նշված ասուլիսների ընթացքում գործիչներին ուղղվել է 30 –ից (Բաբայանի, 15.12.12) մինչեւ 70 հարց (Հրանտ Բագրատյանի ասուլիս, 11.12.12):

Անցած տարվա նոյեմբերից ֆեյսբուքում «Հարց ու պատասխան» էջ բացեց նաեւ Zham.am ինտերնետ թերթը, որը փորձում է ֆեյսբուքյան օգտատերերի հարցերի պատասխանները ստանալ տարբեր բնագավառների պատասխանատու ներկայացուցիչներից: Չնայած, որ անցած ամիսների ընթացքում այս էջի կոնտենտների քանակը էապես չի մեծացել եւ էջը մեր դիտարկման փուլում դեռ լայն ճանաչում չունի, սակայն որպես ֆեյսբուքյան երեւույթ եւ լսարանի հետ կապի փորձ, սա եւս արժե հիշատակել:

## ԻՆՏԵՐԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ


Վերը նշված օգտատերերն ունեն տարբեր չափի անմիջական լսարաններ, որոնք բաղկացած են էջերը հավանողներից (Likes)/կամ օգտատերերի բարեկամներից (Friends) եւ նրանց բաժանորդներից (Followers): Այս ցուցանիշները հրապարակային դարձրած օգտատերերի համեմատ ամենից մեծ լսարան ունի ՀՀԿ անդամ, ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը (12 500-ից ավելի օգտատեր), ընդ որում՝ նրա բաժանորդների քանակը գերազանցում է ֆեյսբուքյան բարեկամների քանակին: Մյուս օգտատերերի (այդ թվում նաեւ՝ այս կամ այն ուժին հարող ակտիվ համակիրների) ֆեյսբուքյան լսարանները 6000-ը չեն անցնում (**տես՝ Հավելված, Աղյուսակ 1 եւ 2**):

Չնայած, որ տարբեր օգտատերերի դեպքում նրանց էջերում հայտնված նյութերի առիթով ծավալված քննարկումների քանակը տարբեր է, բայց ընդհանուր առմամբ հենց այս 11 օգտատերերի ինտերակտիվությունն ավելի բարձր ցուցանիշներ ունի, քան քաղաքական կուսակցությունների պաշտոնական էջերում եւ նրանց հարող ֆեյսբուքյան խմբերում ծավալված քննարկումների քանակն է (**տես՝ Հավելված, Աղյուսակ 3, 4, 5 եւ 6**):

**Այլ խոսքերով, ընտրությունների թեմայով 2012թ. դեկտեմբերի 1-ից մինչև 2013թ. հունվարի 20 ընկած ժամանակահատվածում առանձին օգտատերերի էջերում ծավալված քննարկումներն ավելի շատ, իսկ այլ օգտատերերի հետ հարց ու պատասխանի տեսքով կապն ավելի ինտենսիվ է եղել, քան հատուկ այդ նպատակով բացված խմբերում եւ կամ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի պաշտոնական էջերում:**

Քաղաքական գործիչներից ընդհանուր ակտիվությամբ ( ընտրությունների մասին նյութերի քանակը, սեփական ստատուսներով հանդես գալը, դրանց առիթով էջերում ծավալված բոլոր քննարկումների քանակը, այն քննարկումների քանակը, որոնց մասնակցել են նաեւ դիտարկված քաղաքական գործիչները) մյուսներից էականորեն առանձնանում է Ժառանգություն կուսակցության քարտուղար **Ստյոպա Սաֆարյանը**: Նրա էջի բոլոր այս ցուցանիշները համադրելի են ֆեյսբուքյան ակտիվիստի համարում ունեցող այլ օգտատերերի ցուցանիշների հետ: Ինչպես օրինակ, հայտնի բլոգեր եւ ֆեյսբուքյան օգտատեր Տիգրան Քոչարյանի (Փիդ), ՀԱԿ համակիրներ Հրանտ Տեր - Աբրահամյանի եւ Վիլեն Գաբրիելյանի (Նավակ ճոճոդ) ակտիվությունները: Այս վերջին օգտատերերի գրառումների նկատմամբ հետաքրքրվածությունը բավական բարձր է, եւ նրանց նյութերի առիթով ծավալվող քննարկումները բավական մեծ թիվ են կազմում:

**Քաղաքական գործիչների եւ համակիր օգտատերերի ակտիվության մակարդակ (Որպես ստատուս են ընկալվել միայն էջի համապատասխան սյունակում տեղադրված եւ ինքնուրույն բովանդակություն ունեցող նյութերը)**



Չնայած, որ դեկտեմբերի 2-ին ԱԺ հավելյալ ընտրությունների պաշտոնական արդյունքներով ժառանգություն կուսակցության քարտուղար Ստյոպա Սաֆարյանը չդարձավ պատգամավոր, սակայն ֆեյսբուքյան հանրությունը նրան հռչակեց «Ֆեյսբուքյան պատգամավոր», նրա ֆեյսբուքյան ակտիվությունները անվանեցին իսկական ընտրություններ, քանի որ նա ակտիվորեն լուսաբանում էր իր քարոզարշավը Երեւանի Ավանի եւ Նոր-Նորքի թաղամասերում, ամեն օր ներկայացնում էր բնակիչների հետ ունեցած զրույցներն ու բազմաթիվ ստատուսներ էր գրում իր տպավորությունների մասին:

**Իմիջիայլոց, «իսկական ընտրություններ» արտահայտությունը սկսեց շրջանառվել ֆեյսբուքում մեր դիտարկման փուլում, ընդգծելով նաև ֆեյսբուքահանրության առջև այս կամ այն թեկնածուի քննություն բռնելու անհրաժեշտությունը:**

Նախագահի 7 թեկնածուների ֆեյսբուքյան էջերում ինտերակտիվության աստիճանը էապես տարբեր է: Ասենք, **Անդրիաս Ղուկասյանի**, **Վարդան Մեղրակյանի**, **Պարույր Հայրիկյանի** էջերում տեղադրված եւ օգտատերերի քննարկմանն արժանացած նյութերի քանակը զգալիորեն ավելի շատ է (համապատասխանաբար՝ 10, 10 եւ 8 նյութ), քան մյուս 4 թեկնածուների նույն կարգի նյութերն են: Բայց 7 թեկնածուներից միայն **Արման Մելիքյանն** է մասնակցել իր էջում ծավալվող քննարկմանը: Մյուսների էջերում նման դեպքեր հունվարի 4-20 ընկած ժամանակահատվածում, այսինքն՝ պաշտոնական քարոզչությանը ընդհուպ նախորդող օրերին, առհասարակ չեն եղել (**տես՝ Հավելված, Աղյուսակ 7 եւ 8**):

Զարմանալի չէ այսպես կոչված նորահայտ թեկնածուների նկատմամբ հետաքրքրության բարձր աստիճանը, ինչը դրսևորվեց նրանց էջերում տեղադրված նյութերի մեկնաբանությունների քանակով: Այսպես, օրինակ, առաջին շրջանում Անդրիաս Ղուկասյանի նյութերի քոմենթները հասնում էին մինչև 99-ի (ցուցանիշ, որը բնորոշ է Ֆեյսբուքյան հանրության շրջանում ճանաչում ունեցող ակտիվիստ օգտատերերի էջերին): Մինչդեռ, հայտնի քաղաքական գործիչներ Հրանտ Բագրատյանի եւ Պարույր Հայրիկյանի դեպքում մեկ նյութին արվող քոմենթների առավելագույն քանակը եղել է համապատասխանաբար՝ 20 եւ 15:

## Քաղաքական հումորը, սարկազմը եւ սեւ PR-ը՝ նախընտրական լեյտմոտիվ


Դեկտեմբերը դարձավ նախագահական ընտրությունների մասնակցության տարբեր կռահելի սցենարների մեկը մյուսի ետեւից ի չիք դառնալու փուլ: Բացի իշխանական ՀՀԿ-ից եւ ընդդիմադիր Ժառանգություն կուսակցությունից, մնացած չորս խորհրդարանական ուժերը՝ ԲՀԿ-ն, ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն- ու «Ազատ դեմոկրատները», հայտարարեցին այն մասին, որ ոչ միայն չեն առաջադրելու թեկնածուներ, այլեւ պաշտոնապես չեն սատարելու որեւէ թեկնածուի:

Առաջադրումների գործընթացի ինտրիգը դարձավ թեկնածուների այսպես կոչված ինքնաառաջադրումների շարքը: Ֆեյսբուքյան հանրությունն արձագանքեց հասունացած քաղաքական ճգնաժամին, ինչն արտահայտվեց ընթացող աննախադեպ եւ աննախադեպ չընթացող ընտրական գործընթացների տեսքով: Սա ֆեյսբուքում քաղաքական հումորի, սարկազմի, սեւ PR-ի ավիք առաջացրեց: Ընդ որում, եթե խորհրդարանական ընտրությունների ժամանակ այդ բացասական նշանով քարոզչության գլխավոր լոկոմոտիվը առանձին այսպես կոչված անոնիմ օգտատերերն էին, ապա այս անգամ «իրավիճակին հումորով» մոտեցողները գրեթե բոլորն էին՝ սկսած քաղաքական գործիչներից մինչև սովորական օգտատերեր:

Տարբեր պատմությունների առիթներով շրջանառվող ծաղրանկարների, կոլաժների եւ ուղղակի սրամիտ բառախաղերով ստատուսների զանգվածում կարելի էր հանդիպել նաեւ

հատուկ այսպես կոչված դրա համար բացված էջերի (Առլեկին, Մկրատ, Քաղաքական անեկդոտ) նյութեր: Մակայն, դրանք իրենց թվով զիջում էին այսպես կոչված իդենտիֆիկացվող օգտատերերի նույն ուղղվածության նյութերի քանակին:

### Մև PR, քաղաքական հումոր, քաղաքական սարկազմ



Որոշ արտահայտություններ նույնիսկ սկսեցին հավակնել քաղաքական մեմեր (meme – ինտերնետում մեկից մյուսին արագ փոխանցվող եւ համբավ ձեռք բերած բովանդակություն) դառնալուն: Ինչպես ասենք Ժառանգություն կուսակցության անդամ **Ստյոպա Սաֆարյանի** կողմից ողջ դեկտեմբերի ընթացքում անընդհատ օգտագործվող «աներձագ» բառը, որն օգտագործում էր, երբ հանդես էր գալիս նախագահական ընտրությունների ընթացքում իշխող ՀՀԿ-ի կողմից ընտակեղծիքների մեխանիզմների մշակման մասին իր կարծիքներով ու մեկնաբանություններով: Այսպես նա նաև ընդհանուր գիծ էր քաշում դեկտեմբերի 2-ի ԱԺ հավելյալ ընտրությունների եւ նախագահական ընտրությունների միջեւ: Հիշեցնենք, որ դեկտեմբերյան խորհրդարանական ընտրություններում Երեւանի Ավան եւ Նոր Նորք ընտրատարածքներում Ստյոպա Սաֆարյանի մրցակիցը Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի կնոջ եղբայրն էր:

Բազմաթիվ են այս գործչի սարկաստիկ արտահայտությունները Ֆեյսբուքում. բառախաղեր, քաղաքական խորքային կոնտեքստներին լավատեղյակ ֆեյսբուքյան օգտատերերին հասկանալի ստատուսներ եւ այլն: Ասենք՝ Տ. Մարգարյանի հասցեին՝ «Ձերդ

Տարոնափայլություն», ԿՀՀ-ի հասցեին՝ «Ամենայն հայոց ընտրողիկոս «Տիգրան Մուկուչյան եւ Co» ՍՊԸ» եւ այլն:

**Հումորի, սարկազմի եւ սեւ PR -ի բազմաթիվ օրինակներ կարելի է բերել դեկտեմբերի ընթացքում շրջանառվող տարբեր թեմաներով.**

**Թեկնածուների առաջադրման թեմայով՝**

**ՀՀ 15 նախագահի թեկնածուների առաջադրման մասին.**«Առաջարկ ԿՀՀ-ին: Ընտրագրավի փոխարեն թեկնածուներից փսիխո պահանջեք»:

«Բանկերին խորհուրդ՝ նոր վարկային պորտֆել առաջարկել՝ „ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ„: Թող մարդիկ վերցնեն ու իրենց թեկնածությունն առաջադրեն» (Ֆեյսբուքյան ակտիվիստներ, 24.12.12):

**Տիգրան Քոչարյանը (Փիղ)** նախագահի արդեն որոշված 8 թեկնածուների մասին՝ «Волк и семеро козлят», կամ՝ էլի նա նույն թեմայով՝ «Աշխարհի վերջի միջոցառումների մեկնարկը տրված է, Բագրատյանը ուզում է նախագահ դառնալ» (20.12.12):

Ողջ դեկտեմբերի ընթացքում Ֆեյսբուքում ընդգծված սարկազմով էր շրջանառվում «Էպոսագետ» բառը՝ նկատի ունենալով նախագահի թեկնածու Վարդան Սեդրակյանին, որը ոչ մի տեղ չի աշխատում, հանրությանը ներկայացավ որպես էպոսագետ, եւ ի պատասխան լրագրողների հարցին, թե որտեղի՞ց գործազուրկ քաղաքացին ունի առաջադրման համար 8 մլն ընտրագրավը, հայտարարում էր, որ ինքը կարող է վճարել նաեւ մյուս թեկնածուների համար:

Ի դեպ, «Էպոսագետ» բառի այս նոր բացասական ու Ֆեյսբուքում ակտիվորեն շրջանառվող կոնտեքստի առիթով ՀՀԿ ակտիվիստ Տարոն Պարսամյանը կոչով դիմեց բոլորին այլեւս Վ.Սեդրակյանի անունը հնչեցնելու փոխարեն չգործածել էպոսագետ բառը եւ չվարկաբեկել այդ լուրջ գիտական ճյուղը:

Դեկտեմբերյան մյուս պատմությունը դարձավ «Ա1+»-ի թղթակցի նկատմամբ ՀՀԿ խորհրդարանական խմբակցության անդամ Մհեր Սեդրակյանի անհարգալից պահվածքը: Սկանդալը Ֆեյսբուքում բուռն քննադատության եւ դրան զուգահեռ՝ քաղաքական սարկազմի նոր ալիքի պատճառ դարձավ:

Այս առիթով շատ է մեջբերվել ՀՀԿ համագումարում գործող նախագահ Ս. Սարգսյանի ելույթից այն հատվածը, որտեղ նա խոսում է լրագրողների նկատմամբ այլեւս բռնություններն արմատախիլ արվելու եւ խոսքի ազատությունը իրողություն դարձնելու մասին: Այս հայտարարության եւ բառացիորեն մի քանի օր անց ՀՀԿ պատգամավորի՝ լրագրողին շարված արտահայտությունը «Յալլա, կտամ ծնոտդ կպոկեմ» մի քանի օր շարունակ ֆեյսբուքում շրջանառվող մի շարք բառախաղերի, ծաղրանկարների լեյտմոտիվն էր: Նյութեր, որոնց մեջ ընդգծված էր գործող նախագահ Ս.Սարգսյանի՝ սկանդալի նախօրեին

ՀՀԿ համագումարում հնչեցրած հայտարարությունների եւ հանրապետականների գործի մեջ եղած անջրպետն ու մեղմ ասած անհամապատասխանությունը: Այս դեպքում՝ լրագրողների նկատմամբ գործնական վերաբերմունքի հարցում:

Տարածվեցին ծաղրանկարներ Մ.Սեդրակյանի պատկերով: Ասենք՝ Սեդրակյանը բռնցքամարտիկի հագուկապով, Սեդրակյանի նկարը հետեւյալ գրառմամբ՝ «Գեղեցիկ չէ, ապամոնտաժել»:

«Սերժ Սարգսյանը ներողություն է խնդրել Մհեր Սեդրակյանից ՀՀԿ համագումարում լրագրողների ազատության եւ անպատժելիությունից խոսելու համար», «Դուք ապրելու եք ապահով Հայաստանում: Միայն թե ձեր ծնոտները պինդ պահեք, մեկ էլ սրճարաններում աշխատեք չխոսել. Սերժ Սարգսյան, Նախընտրական ծրագիր» («Ֆեյսբուքյան ակտիվիստներ», 19.12.12):

ՀՀԿ անդամների առաջին ռեակցիան այս սկանդալին եղավ Ֆեյսբուքում: ԿԳ նախարար Ա. Աշոտյանը հայտարարեց, որ ցավում է կատարվածի համար եւ պատրաստ է ներողություն խնդրել լրագրողից: Իսկ ԱԺ պատգամավոր Մարգարիտ Եսայանը Ֆեյսբուքում ցավ հայտնեց այն բանի համար, որ այդ պահին չի եղել լրագրողի կողքին եւ հնարավորություն չի ունեցել, ինչպես ինքն է գրել «կարգի հրավիրելու» հանրապետական գործընկերոջը:

Սկանդալին անդրադարձան նաեւ այն կուսակցությունների ներկայացուցիչները, որոնք իրենց կազմակերպությունների նախագահական ընտրություններին չմասնակցելու պատճառով դեկտեմբերի երկրորդ կեսից կամ զգալիորեն նվազեցրել էին ակտիվությունները Ֆեյսբուքում, կամ էլ հանդես էին գալիս ոչ ընտրական թեմաներով: Ասենք՝ ՀՅԴ անդամ Կիրո Մանոյանը, որն իր էջում գրեց. «Հուսով եմ ՀՀԿ-ի պատգամավորների կողմից ՀՀԿ պատգամավոր Մհեր Սեդրակյանի փոխարեն այս արտահայտությունները (նկատի ունի ՀՀԿ անդամ, ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի՝ ուրիշի փոխարեն ներողություն խնդրելու պատրաստակամության մասին ստատուսը) նշանակում են, որ ՀՀԿ-ում կքննարկվի Մհեր Սեդրակյանի պահվածքի հարցը: Այլապես ստացվում է, որ այս դեպքը ֆրանսիացիների ասած «անուշ կապելու» նպատակ է հետապնդում, առանց որ մեղավորն ընդունի իր մեղքը: Էլի՞ իմիտացիա» (19.12.12):

## ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄՆԵՐ Ի ՄԱՍԻՆ ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ

«Կարոտել էի Վարդան Օսկանյանի գրառումները ՖԲ-ում: Այս տարվա իմ առաջին քաղաքական գրառումն եմ անում Օսկանյանի մինիվերլուծության հետքերով:

... Հիմա Օսկանյանը երկրից դժգոհ լինելով, պայքարո՞ւմ է: Լքո՞ւմ է Հայրենիքը: Թե՞ լքելու հնարավորություն չունենալով՝ ամբողջական անտարբերություն է ցուցաբերում երկրում ընթացող կամ չընթացող գործընթացների նկատմամբ: Կողմնորոշվեք, պարոն Օսկանյան », - տարեսկզբին անդրադառնալով Ֆեյսբուքում Վարդան Օսկանյանի երկարատեւ լռությանը՝ գրեց ՀՀԿ անդամ, ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը (9.01.12): Սակայն, ԲՀԿ այս գործիչը՝ Վ. Օսկանյանը, միակը չէր, որ դեկտեմբերի երկրորդ կեսից իրեն ոչ բնորոշ պասիվություն ցույց տվեց ֆեյսբուքում:

Դեկտեմբերի առաջին կեսին քաղաքական ու վերլուծական դիսկուրսում շրջանառվում էին մի քանի սցենարներ նախագահական ընտրություններին Հայաստանի տարբեր քաղաքական ուժերի մասնակցության ձեւաչափերի, հնարավոր ու անհնար դաշինքների, սատարումների մասին:

Բոլոր այս սցենարների ակնհայտ դրսևորումները կարելի է գտնել դեկտեմբերի ընթացքում մեր դիտարկած քաղաքական գործիչների ֆեյսբուքյան էջերի բովանդակություններից: Դրանց քանակական ընդհանուր ցուցանիշները տես՝ **Հավելված, Գրաֆիկ . Ընտրությունների մասին նյութերում արձարձված թեմաներ եւ դրանց անդրադարձների քանակ:**

Ընդհանուր առմամբ դեկտեմբեր-հունվար ամիսների ընթացքում ընտրական տարբեր երևույթների ու իրադարձությունների մասին 11 քաղաքական գործիչների ու 4 համակիր ֆեյսբուքյան էջերում բարձրացվել են 85 տարբեր խնդիրներ, որոնց մեջ գերակշիռ մեծամասնություն են կազմել ընտրությունների մասնակցության ձեւաչափերի, թեկնածուների առաջադրման, ընտրությունները բոյկոտելու կամ տակտիկական այլ խնդիրներով նյութերը: **Մանրամասները՝ Հավելված Աղյուսակ 9,10, 11, 12, 13, 14, 15, 16:**

Հենց դեկտեմբերի սկզբից մենք արձանագրեցինք ՀՀԿ եւ ԲՀԿ գործիչների միջեւ Ֆեյսբուքում ընթացող բանավեճերն ու բախումները ԲՀԿ - ՀԱԿ հնարավոր դաշինքի կամ ԲՀԿ-ի սեփական թեկնածուով ընտրություններին հնարավոր մասնակցության առիթով:

ԲՀԿ-ՀԱԿ դաշինքի մասին համընդհանուր ելույթների ֆոնին ակնհայտ էր ՀԱԿ գործիչների եւ համակիր օգտատերերի պասիվ, սպասողական վիճակը ֆեյսբուքում:

Այսպես, դեկտեմբերի առաջին կեսին Ա.Աշոտյանը, Կ. Ավագյանը եւ ակտիվիստ Տ.Պարսամյանը սկսեցին իրենց էջերում տեղադրել մեկը մյուսի ստատուսները, որոնց մեջ քննադատվում կամ ծաղրի էր ենթարկվում ԲՀԿ առաջնորդի Բոյուսելում արած



հայտարարությունը Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի անհնարինության մասին, քանի որ կա սերտաճում իշխող կուսակցության եւ օլիգարխների միջեւ: ԲՀԿ-ՀՀԿ գործիչները (Վահան Բաբայան-Կարեն Ավագյան) սկսեցին փոխադարձաբար մեղադրել ՀՀԿ-ական եւ ԲՀԿ-ական ներկայացուցիչներին ոչ մաքուր ճանապարհով ունեցվածք դիզելու համար: Այս բանավեճին անմասն մնացին ՀԱԿ-ի մեր դիտարկած ներկայացուցիչները, որոնց իշխանությունների դեմ պայքարի գլխավոր լեյտմոտիվը ավանդաբար եղել է ավագակապետության դեմ պայքարն ու այդ կարգի պետության կազմաքանդումը:

Քաղաքական ուժերի հնարավոր վերադասավորումների մասին բանավեճերի գագաթնակետը դարձավ Լ. Ջուրաբյան-Վ. Օսկանյան սրճարանային գրույցի գաղտնի տեսագրության հայտնվելը Ֆեյսբուքում, այնուհետեւ՝ սկզբում ԲՀԿ առաջնորդ Գ. Ծառուկյանի, հետո նաեւ ՀԱԿ առաջնորդ Լ. Տեր-Պետրոսյանի՝ ընտրություններին ոչ մի ձեւաչափով չմասնակցելու մասին հայտարարությունները: Նման հայտարարությամբ հանդես եկան նաեւ ՀՅԴ-ն, «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունը:

Դեկտեմբերի վերջին իրենց առաջադրման մասին որոշումները նախագահի կուսակցական եւ ինքնաառաջադրված թեկնածուները տարբեր կերպ էին հիմնավորում: Այսպես, «Ազատություն» կուսակցության առաջնորդ **Հ. Բագրատյանն** իր որոշումը Ֆեյսբուքում բացատրեց այն հանգամանքով, որ առաջադրվում է, քանի որ կա ազատական հայացքներով թեկնածուի անհրաժեշտություն:

«Ազգային համաձայնություն» կուսակցության առաջնորդ **Արամ Հարությունյանի** եւ թեկնածու **Անդրիաս Ղուկասյանի** առաջադրման գլխավոր նպատակը, ինչպես երևում է ՁԼՄ-ներին տված նրանց հարցազրույցներից եւ Ֆեյսբուքում նրանց էջերի բովանդակություններից, ընտրությունների կանխորոշված էլքը խոչընդոտելն է: Այս երկու թեկնածուների միջեւ այս հարցում տարբերությունն այն է, որ Անդրիաս Ղուկասյանը որպես թեկնածու դիմեց ԿԸՀ՝ պահանջելով չեղյալ հայտարարել ՀՀԿ առաջնորդ եւ գործող նախագահ Ս.Սարգսյանի թեկնածությունն ի սկզբանե, իսկ Ա. Հարությունյանը կոչ արեց բոլոր թեկնածուներին ետ կանչել իրենց թեկնածությունները ընտրություններից 10 օր առաջ եւ այդպես խոչընդոտել Ս.Սարգսյանի վերընտրման լեգիտիմությանը:

**Բոյկոտը** դարձավ ֆեյսբուքում հունվարյան ելույթների կարեւոր կետերից մեկը, որին քննադատաբար էին մոտենում ՀՀԿ եւ Ժառանգություն կուսակցությունների գործիչները, հասկանալի է, տարբեր հիմնավորումներով:

Ժառանգության քարտուղար **Ստյոպա Սաֆարյանն** իր ֆեյսբուքյան էջում քանիցս ընդգծում էր, որ բոյկոտն այս դեպքում արդյունավետ չի լինելու, եւ դրա ապացույցը դեկտեմբերի սկզբի ԱԺ հավելյալ ընտրությունների ընթացքն է Երեւանի երկու թաղամասերում: «Բոյկոտի դեպքում ընտրվում է Աներձագ: Բոյկոտողները նվեր են անում Ս. Սարգսյանին: Այդպես չէի մտածի, եթե բոյկոտողները փետրվարի 18-ին ընտրողներին հրավիրեն Ազատության հրապարակ, այլ ոչ թե մղեին դեպի խոհանոցների չուլանները» (29.12.12):

Նույն կուսակցության անդամ **Դ. Մանասարյանն** իր էջում գրեց. «Եթե Բաֆֆին (Ժառանգության առաջնորդ Բ. Հովհաննիսյանին – Լ.Բ.) չէք ուզում, գոնե այս մարդուն ընտրեք (Հ.Բագրատյանին – Լ.Բ.): Նա Բաֆֆիի հետ միասին այս քարոզարշավին լրջություն կտա» (29.12.12):


ՀՀԿ անդամ **Արմեն Աշոտյանը** բոյկոտի թեմայով իր էջում նշեց, որ ովքեր բոյկոտի կոչ են անում կամ կարճատես են, կամ՝ չուզող: Կարճատես են, որովհետեւ չեն հասկանում, որ Սերժ Սարգսյանի դեմ քվեարկած ընտրողները ապագա նոր եւ ուժեղ ընդդիմության քաղաքական հենարանն են ու պաշարը:



**Անդրիաս Ղուկասյանն** իր առաջադրմամբ, ինչպես նշված է նրա էջում (Ընտրություններ 2013. Ծրագիր ՀՀ նախագահի համար), նպատակ ունի խափանել գործող նախագահի վերընտրման գործընթացը եւ նախագահական ընտրությունները վերածել վստահության հանրաքվեի: Սա միաժամանակ ընկալվեց եւ որպես երկրում իրավիճակը փոխելու համար տեսականորեն ռացիոնալ, եւ՝ պրակտիկորեն իռացիոնալ մարտավարություն:



«Նախագահի թեկնածու Անդրիաս Ղուկասյանը կոչով դիմել է մյուս թեկնածուներին՝ հրաժարվել ընտրապայքարից: Ինձ այլ հարց է հուզում: Արդյո՞ք քաղաքական դաշտում առաջին քայլերն անողն իրավունք ունի նման ուղտիմատումներ ներկայացնել քաղաքական մեծ փորձ ունեցող Բաֆֆի Հովհաննիսյանին եւ Հրանտ Բագրատյանին: Լավ, ընդունենք, այս հարցը նրան իսկապես մտատանջում է: Չէ՞ր կարելի հանդիպումներ ունենալ նշած քաղաքական գործիչների հետ եւ կիսվել նրանց հետ գաղափարներով: Առավելեւս, որ թե Բաֆֆին, թե Բագրատյանը բաց են եւ մարդամոտ: Թե՞ սա ինքնափիառի մի ձեւ է», - գրեց ֆեյսբուքյան օգտատերերից մեկն իր էջում այս թեկնածուի մասին:



Նախագահի թեկնածուները հունվարի 4-20 ընկած ժամանակահատվածում իրենց ֆեյսբուքյան էջերում անդրադարձել են տարբեր խնդիրների: Այդ մասին արդյունքները՝ ստորեւ:

**Թեկնածուների էջերում բարձրացված թեմաներ (2013թ. հունվարի 4-20)**









Մենք շարունակում ենք հետազոտությունը նաև պաշտոնական քարոզարշավի ընթացքում: Այս փուլում նպատակ ունենալով հետեւելու Ֆեյսբուքում ՀՀ նախագահի թեկնածուների եւ ռեյտինգային ԶԼՄ-ների կողմից կիրառվող քարոզչական ձեռքներին, առանձնահատկություններին եւ հանրության մեջ դրանց արձագանքներին:

Արդյունքները՝ մեր տեղեկագրի հաջորդ համարում:



## ՀԱՎԵԼՎԱԾ

### Աղյուսակ 1.

Քաղաքական գործիչների ֆեյսբուքյան լսարանները եւ նրանց էջերում ինտերակտիվ անդրադարձների հնարավորությունները

(2012 թ. դեկտեմբերի 1 – 2013թ. հունվարի 20)

Քաղգործիչ	Հավանողների քանակ		Բարեկամների քանակ		Բաժանորդների քանակ		Էջի մասին այլ տվյալներ
	01.12.12	20.01.13	01.12.12	20.01.13	01.12.12	20.01.13	
Կարեն Ավագյան ՀՀԿ	-	-	-	-	-	-	
Արմեն Աշոտյան ՀՀԿ	-	-	5000	4987	5726	7142	
Վարդան Օսկանյան ԲՀԿ	5800	5875	-	-	-	-	
Վահե Էնֆիաջյան ԲՀԿ	-	-	-	-	202	83	
Վահան Բարայան ԲՀԿ	-	-	1341	1380	-	-	
Ստյոպա Սաֆարյան (Ժառանգ. կուսակցութ.)	-	-	4167	4524	-	-	
Դավիթ Սանասարյան (Ժառանգ. կուսակ.)	-	-	-	-	241	261 (Ցուցանիշները՝ մինչեւ հունվարի 10)	
Նիկոլ Փաշինյան (ՀԱԿ)	-	-	3309	3546	-	-	
Հրանտ	1171	1589	-	-	-	-	

Բազրատյան (ՀԱԿ, Ազատութ. կուսակ.)							
Լիլիթ Գալստյան (ՀՅԴ)	-	-	5121	5083	494	663	
Կիրո Մանոյան (ՀՅԴ)	-	-	4866	4983	449	468	

*Էջը փակ է այլ օգտատերերի նյութերի համար*

*Էջը բաց է այլ օգտատերերի նյութերի համար*



**Աղյուսակ 2.**

**Քաղաքական ուժերի համակիր օգտատերերի լսարանները եւ նրանց էջերում ինտերակտիվ անդրադարձների հնարավորությունները**

**(2012 թ. դեկտեմբերի 1 – 2013թ. հունվարի 20)**

Համակիր օգտատերեր	Հավանողների քանակ		Բարեկամների քանակ		Բաժանորդների քանակ		Էջի մասին այլ տվյալներ
	01.12.12	20.01.13	01.12.12	20.01.13	01.12.12	20.01.13	
Հրանտ Տեր-Աբրահամյան (ՀԱԿ համակիր)	-	-	2907	2981	57	100	
Նավակ Ճոճող (Վիլեն Գաբրիելյան, ՀԱԿ համակիր)	-	-	-	-	172	212 (Ցուցանիշները՝ մինչև հունվարի 12)	
Տարոն Պարսամյան (ՀՀԿ համակիր)	-	-	-	-	320	350	
Տիգրան Քոչարյան (ՀՀԿ համակիր)	-	-	4650	4818	648	703 (Ցուցանիշները՝ մինչև հունվարի 14)	

*Էջը փակ է այլ օգտատերերի նյութերի համար*

*Էջը բաց է այլ օգտատերերի նյութերի համար*



**Աղյուսակ 3.**  
**Էջերի ինտերակտիվության ցուցանիշներ**  
**(քաղաքործիչներ)**

(2012 թ. դեկտեմբերի 1 – 2013թ. հունվարի 20)

Քաղաքործիչներ	Ընտրությունների մասին նյութերի ընդհանուր քանակ		Քննարկված նյութերի քանակ առանց էջի հեղինակի մասնակցության		Քննարկված նյութերի քանակ էջի հեղինակի մասնակցությամբ		Քննարկված նյութերի ընդհանուր քանակ		Քննարկված նյութերը կազմել են ընտրությունների մասին բոլոր նյութերի %	
	01 - 31.12.12	01.- 20.01.13	01 - 31.12.12	01.01.13- 20.01.13	01 - 31.12.12	01.01.13- 20.01.13	01 - 31.12.12	01 - 20.01.13	01- 31.12.12	01- 20.0 1.13
Կարեն Ավագյան ՀՀԿ	60	9	17	3	6	1	23	4	38%	44%
Արմեն Աշոտյան ՀՀԿ	60	9	16	2	17	5	33	7	55%	78%
Վարդան Օսկանյան ԲՀԿ	9	0	5	0	0	0	5	0	56%	0%
Վահե Էնֆիաջյան ԲՀԿ	22	6	15	4	1	0	16	4	73%	67%
Վահան Բաբայան ԲՀԿ	102	19	16	2	0	0	16	2	16%	11%
Ստյոպա Սաֆարյան Ժառանգություն	221	62	35	3	76	22	111	25	50%	40%
Դավիթ Սանասարյան Ժառանգություն	96	12	27	2	42	7	69	9	72%	75%
Նիկոլ Փաշինյան ՀԱԿ	24	6	9	2	0	1	9	3	38%	50%
Հրանտ Բազրատյան ՀԱԿ	34	33	8	10	0	0	8	10	24%	30%
Լիլիթ Գալստյան ՀՅԴ	33	11	5	1	15	4	20	5	61%	45%
Կիրո Մանույան ՀՅԴ	22	4	3	2	9	0	12	2	55%	50%



**Աղյուսակ 4.**  
**Էջերի ինտերակտիվության ցուցանիշներ**  
**(համակիր օգտատերեր )**

**(2012 թ. դեկտեմբերի 1 – 2013թ. հունվարի 20)**

Համակիր օգտատերեր	Ընտրությունների մասին նյութերի ընդհանուր քանակ		Քննարկված նյութերի քանակ առանց էջի հեղինակի մասնակցության		Քննարկված նյութերի քանակ էջի հեղինակի մասնակցությամբ		Քննարկված նյութերի ընդհանուր քանակ		Քննարկված նյութերը կազմել են ընտրությունների մասին բոլոր նյութերի %	
	01 - 31.12.12	01.- 20.01.13	01 - 31.12.12	01.01.13- 20.01.13	01 - 31.12.12	01.01.13- 20.01.13	01 - 31.12.12	01 - 20.01.13	01- 31.12.12	01- 20.01.13
Հրանտ Տեր - Աբրահամյան ՀԱԿ	39	20	4	3	28	12	32	15	82%	75%
Նավակ Ճոճող (Վիլեն Գաբրիելյան ) ՀԱԿ	71	19	5	6	63	11	68	17	96%	89%
Տիգրան Քոչարյան ՀՀԿ	29	5	4	0	24	5	28	5	97%	100%
Տարոն Պարսամյան ՀՀԿ	37	10	7	0	14	2	21	2	57%	20%

**Աղյուսակ 5.**  
**Էջերի ինտերակտիվության ցուցանիշներ**  
**(Ֆեյսբուքյան խմբեր)**

**(2012 թ. դեկտեմբերի 1 – 2013թ. հունվարի 20)**

Խմբերի անվանումը	Ընտրությունների մասին նյութերի քանակ		Նյութեր, որոնց շուրջ ծավալվել է քննարկում		Քննարկված նյութերը՝ ընտրությունների մասին նյութերի ընդհանուր քանակի %-ը	
	01-31.12.12	01 -20.01.13	01-31.12.12	01 -20.01.13	01-31.12.12	01 -20.01.13
Heritage Party – Ժառանգություն կուսակցություն	47	14	6	0	13%	0%
Նախագահական ընտրություններ 2013	929	179	17	13	2%	7%
Քաղաքացիական հասարակություն ԲԼՈԳ	246	111	3	3	1%	3%
Քվեն Ուժ է	113	38	19	3	17%	8%
Վարդան Սեդրակյան խումբ (2013 հունվարի 4-ից)	-	48	-	0	-	0%

## Աղյուսակ 6.

Էջերի ինտերակտիվության ցուցանիշներ  
(քաղաքական կուսակցությունների/ուժերի պաշտոնական էջեր )

(2012 թ. դեկտեմբերի 1 – 2013թ. հունվարի 20)

Պաշտոնական էջեր	Նյութերի քանակ		Նյութերի քանակ, որոնց շուրջ ծավալվել է քննարկում		(%)	
	01-31.12.12	01-20.01.13	01-31.12.12	01-20.01.13	01-31.12.12	01-20.01.13
Հայ Ազգային կոնգրես	96	24	1	0	1%	0%
Ժառանգություն կուսակցություն	53	13	7	0	13%	0%

## Աղյուսակ 7.

Թեկնածուների ֆեյսբուքյան լսարանները եւ նրանց էջերում ինտերակտիվ անդրադարձների հնարավորությունները

(2013թ. հունվարի 4 – 20)

Թեկնածուներ	Հավանողների քանակ		Բարեկամների քանակ		Բաժանորդների քանակ		Էջի մասին այլ տեղեկություններ
	04.01.13	20.01.13	04.01.13	20.01.13	04.01.13	20.01.13	
Վարդան Սեդրակյան	4274	4528					
Արամ Հարությունյան (հունվարի 9-ից)			393	451			
Անդրիաս Ղուկասյան	1293	2024					
Պարույր Հայրիկյան	1533	1753					
Արման Մելիքյան					481	501	
Բաֆֆի Հովհաննիսյան	1767	1796					
Հրանտ Բագրատյան	1357	1589					

Էջը փակ է այլ օգտատերերի նյութերի համար

Էջը բաց է այլ օգտատերերի նյութերի համար





**Աղյուսակ 8.**  
**Թեկնածուների ֆեյսբուքյան**  
**էջերի ինտերակտիվության ցուցանիշներ**  
**(2013թ. հունվարի 4 – 20)**



Թեկնածուներ	Նյութերի քանակ	Նյութերի քանակ, որոնց շուրջ ծավալվել է քննարկում	Այդ թվում՝ քննարկումներ թեկնածուի մասնակցությամբ
	04.01.13-20.01.13	04.01.13-20.01.13	04.01.13-20.01.13
Վարդան Սեդրակյան	16	10 (63%)	0
Արամ Հարությունյան (հունվարի 9-ից)	35	4 (11%)	0
Անդրիաս Ղուկասյան	13	10 (77%)	0
Պարույր Հայրիկյան	31	8 (26%)	0
Արման Մելիքյան	17	2(18%)	1
Բաֆֆի Հովհաննիսյան	7	1(14%)	0
Հրանտ Բազրատյան	32	10 (31%)	0



**Գրաֆիկ.**



**Ընտրությունների մասին նյութերում արձարծված թեմաներ և դրանց անդրադարձների քանակ**

(2012 թ. դեկտեմբերի 1 – 2013թ. հունվարի 20)











## Աղյուսակ 9.

## Ընտրական գործընթաց թեմայով նյութերում արձարծված խնդիրներ եւ դրանց անդրադարձների քանակ

(2012 թ. դեկտեմբերի 1 – 2013թ. հունվարի 20)

Խնդիր	Անդրադարձների քանակ
Թեկնած.առաջադրում	143
Մասնակցության ձևաչափ	80
Քարոզարշավի ընթացք	130
Քարոզարշավի ձեւեր	5
Ընտրացուցակներ	11
Համամ. եւ մեծամասն. ընտրակարգ	2
Այլ երկրների եւ միջ. կազմ. գնահատակ./ դիտ.առաքելություններ	1
Այս կամ այն թեկնածուին արտաքին ուժերի կողմից սատարում	20
Սոցիոլոգիական եւ այլ հարցումներ	9
Թեկնածուների եւ ուժերի ռեյտինգներ	5
Ընտրախախտումներ	44
Կեղծված ընտրություններ	8
ԿԸՀ	5
Ընտրակաշառք	28
Վարչական ռեսուրսի օգտագործում	78
Ընտրական արդյունքների վիճարկում	10
Ընտրական արդյունքների ընդունում	1
Ընտրությունների բոյկոտ	14
Քարոզչական պայքար	5
Նախագահական կառավարում	1

## Աղյուսակ 10.

Ներքադաքական ազատություններ թեմայով նյութերում արձարծված խնդիրներ եւ դրանց  
անդրադարձների քանակ

(2012 թ. դեկտեմբերի 1 – 2013թ. հունվարի 20)

Խնդիր	Անդրադարձների քանակ
Պետություն	13
Սահմանադրություն	14
Օրինականություն	51
Ժողովրդավարական զարգացում	16
Իրավունքներ	57
Քաղաքացիական հասարակություն	39
Դատական համակարգի անկախություն	15
Կոռուպցիա	19
Խոսքի ազատություն	31
Մեդիա	54
Իշխանափոխություն ընտրությունների միջոցով	7
Իշխանափոխության հեղափոխության միջոցով	20
Արդարություն	42
Անպատժելիություն	31
Կրիմինալ	25
Իշխանության եւ բիզնեսի սերտաճում	27
Իշխանություն	102
Ընդդիմություն	112
Հասարակություն	27
Տրաֆիկինգ	2

Քաղաքական դաշտի ընդհանուր գնահատականներ	12
Հակահեղափոխություն	1

### Աղյուսակ 11.

**Արտաքին քաղաքական հարաբերություններ թեմայով նյութերում արժարժված խնդիրներ եւ դրանց անդրադարձների քանակ (2012 թ. դեկտեմբերի 1 – 2013թ. հունվարի 20)**

Խնդիր	Անդրադարձների քանակ
Արտաքին քաղաքական կողմնորոշումներ	3
Հարաբերություններ տարբեր երկրների եւ միջազգային կազմակերպությունների հետ	64
Սփյուռք	10

### Աղյուսակ 12.

**Անվտանգություն/Բանակ/Ղարաբաղ թեմայով նյութերում արժարժված խնդիրներ եւ դրանց անդրադարձների քանակ**

**(2012 թ. դեկտեմբերի 1 – 2013թ. հունվարի 20)**

Խնդիր	Անդրադարձների քանակ
Անվտանգություն ապահովող ուժ, գործիչ	1
Անվտանգության տարբեր խնդիրներ	3
Ժողովրդագրական իրավիճակ	3

Միգրացիա	26
Պատերազմի վերսկսում Ղարաբաղում	4
Բանակ	10
Ղարաբաղյան հակամարտություն	17

### Աղյուսակ 13.

Տնտեսական վիճակ թեմայով թեմայով նյութերում արձարծված խնդիրներ եւ դրանց անդրադարձների քանակ

(2012 թ. դեկտեմբերի 1 – 2013թ. հունվարի 20)

Խնդիր	Անդրադարձների քանակ
Տնտեսական զարգացման կեղծ ցուցանիշներ	6
Հարկեր	5
Բյուջե	28
Տնտեսական ճյուղեր	17
Մենաշնորհներ	1
Մանր եւ միջին բիզնես	3
Ներդրումներ	1
Տնտեսական կախվածություն	1

### Աղյուսակ 14.

Սոցիալական պաշտպանվածություն/առողջապահություն թեմայով նյութերում արձարծված խնդիրներ եւ դրանց անդրադարձների քանակ

(2012 թ. դեկտեմբերի 1 – 2013թ. հունվարի 20)

Խնդիր	Անդրադարձների քանակ
Սպառողական զամբյուղ եւ աղքատություն	16
Հասարակության շերտավորում	2
Նվազագույն աշխատավարձ	6

Նպաստներ	3
Թոշակներ	6
Առողջապահական խնդիրներ	7
Առողջապահական համակարգի կոռուպցիա	1
Թանկացումներ	4

## Աղյուսակ 15.

Բնապահպանություն թեմայով նյութերում արձարձված խնդիրներ եւ դրանց անդրադարձների քանակ

(2012 թ. դեկտեմբերի 1 – 2013թ. հունվարի 20)

Խնդիր	Անդրադարձների քանակ
Բնապահպանների գործունեություն	4
Հանքեր եւ ընդերքի օգտագործում	3
Սեւան	4
Ջրավազանների պահպանություն	4

## Աղյուսակ 16.

Կրթություն/Մշակույթ թեմայով նյութերում արձարձված խնդիրներ եւ դրանց անդրադարձների քանակ

(2012 թ. դեկտեմբերի 1 – 2013թ. հունվարի 20)

Խնդիր	Անդրադարձների քանակ
Մշակութային կապեր	5
Փառատոններ	2
Մշակույթի նախարարություն եւ նախարար	1
Մշակութային տարբեր արժեքների պահպանություն	8

Կրթության նախարարություն և նախարար	6
Բուհեր	5
Կրթաթոշակներ	4
Կրթության մակարդակ և կրթական մրցունակություն	15
Այլ երկրներում կրթություն ստացող հայաստանցիներ	1
Գիտություն	2
Կրթության քաղաքականացում	9